ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

---

06.04.2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
ընթացակարգի շրջանակներում գրանցված
մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2014-1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2014թ. մայիսի 22-ը, ժամը 10:30-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավագյանը/հեռ.011513432,011513435/:

Հայտերը կբացվեն 2014թ. մայիսի 22-ին, ժամը 10:30-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի (որոնք կազմված են՝ 33 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 6 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/8-2014-1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ staff@parliament.am:

ՀԱՐԳԱՆՔՈՎ Գ.ԴՈՒՄԱՆՅԱՆ